"ՎԱՎԵՐԱՑՆՈՒՄ ԵՄ"

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

"26" հոկտեմբերի 2006 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

19 հոկտեմբերի 2006 թվականի N 1466-Ն

ԻՆՈՎԱՑԻՈՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

"Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի "բ" կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում ինովացիոն ոլորտի զարգացման հետեւյալ գերակայությունները՝

ա) ինովացիոն ենթակառուցվածքների ստեղծումն ու զարգացումը,
բ) էներգիայի այլընտրանքային աղբյուրները,
գ) բարձր տեխնոլոգիական մշակումները,
դ) էկոլոգիապես նախընտրելի տեխնոլոգիաների ներդրումն ու զարգացումը:

2. Հայաստանի Հանրապետության առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարին՝ Հայաստանի Հանրապետության շահագրգիռ նախարարությունների հետ համատեղ իրականացնել ինովացիոն ոլորտի գերակա ուղղությունների զարգացման ապահովմանն ուղղված միջոցառումներ:

ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-ԻՆ